## ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**
**Հաշվետվություն թիվ 10, 04.07.2024թ.**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 03.07.2024թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-39/02L**) Դավթաշեն մասնաճյուղի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-39/02L
Դաս: ԾԳ
«03» հուլիսի 2024թ.

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԴԱՎԹԱՇԵՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{6}$-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ անհրաժեշտություն է առաջացել Բանկի Դավթաշեն մասնաճյուղի գործունեությունն իրականացնել նոր վարձակալված տարածքում՝ Բանկի Խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Բանկի Խորհրդի 2007 թվականի օգոստոսի 17-ի թիվ 19/03 որոշմամբ հաստատված Դավթաշեն մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրեն Միեր Անանյանին ապահովել «Երևան, Դավթաշեն Դավթաշեն 3-րդ թաղամաս 12/1» հասցեում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Բանկի Դավթաշեն մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Խորհրդի նախագահ՝** **Գ. Հովհաննիսյան**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • АРАРАТБАНК ОАО
02500518